

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԽՈԿՈՒՄՆԵՐ

(Ճառու Առաքելական ընթերցումներուն առիթով)

ՀՈՒՆՁՔԻՆ ՀԱՆԴԵՊ

(Ա. Կիր. Յիսնակաց)

(Ա. Թես. Ա. 2-10)

Առաջին մտածումը՝ զոր հոգևոր գործիչը կ'ունենայ իր մշակած գաղտին արդիւնալից պտղաբերումին ի տես, իր անձին խորհուրդը չի կրնար ըլլալ բնաւ։ Անկա իր մէջ չէ որ կը փնտռէ իր յաջողութիւններուն բանալին, այլ իր գործունէութեան ճամբուն վրայ հանդիպած բարի տրամադրութիւններուն մէջ, ու միևնոյն ատեն երկնային այն հովանաւորութեան մէջ, որով համոզուած է թէ բարութեանց Տէրը օրհնած է իր գործը։

Այդ երկուքին միասնական յուշածումը, այս պատճառաւ, անոր մէջ յառաջ կը բերէ մէկ կողմէ՝ զորովի սրտազին զեղում մը գէպի իր հօտը, ու միւս կողմէ՝ Աստուծոյ ուղղուած գոհացողական փառաբերութիւն մը՝ իր հոգեմէն սիրելիներուն բարեմասնութեանց ազօթախառն յիշատակութեամբը հիւստուած։

Ու որքան աւելի խորհի այդ բարի տրամադրութիւններուն վրայ, որոնք այն ատեն յայտնաբերուած էին իրրեւ անկեղծ սրտի համեստ արտայայտութիւններ, այնքան աւելի անոնք իր ըմբռնումին մէջ կը բացուին ու կը պայծառանան իրրեւ քրիստոնէական կեանքի բուն ճիմնական տարրերը, որոնց համաչափ բարդաւաճումին մէջ է հոգեկան կատարելութիւնը։

Այդ տարրերն են. գործօն Հաւատքը, որ Աստուծոյ՝ Քրիստոսի միջոցաւ մարդուն հետ միացումին զօղիչ կապն է, վաստակալից Սէրը՝ որ այդ միացման բարեբար պտուղը աշխարհի աւանդող քաղցր զօրութիւնն է, և երկայնամիտ Յոյսը՝ որ քրիստոնէին մտածումն ու աշխոյժը գէպի իր ապագան և գէպի յաւիտեանականութիւն ուղղող ներշնչութիւնն է. երեքութիւն մարդկային հոգին աստուածային ներգործութեամբ կենսաւորող ամենաբարձր սկզբունքներու, որոնցմէ կը ստանան իրենց

չարժիչ ոյժը և կանոնիչ կշռոյթը՝ քրիստոնէական բարոյականի ամէն զգացում, փորձառութիւն, տենջանք, պարտականութիւն և առաքելութիւն, և որոնք այնքան սերտիւ կցորդուած են որքան միմեանց՝ նոյնքան նաեւ Քրիստոսով վերածնեալ բոլոր նոր արարածներուն գոյութեանը հետ։

Անկա կը հաւատայ թէ մաքուր փրկութեաներով զարդարուած այդ բարոյական կեանքը, հետի՝ մակերեսային զեղեցիկութիւն մ'ըլլալէ, ընդհակառակն առողջ խորքի մը վրայ է որ կը բարձրանայ. որովհետեւ զիսէ, այսինքն լուսաւորուած խելամասութեամբ համոզուած է թէ այդ կեանքը արդիւնքն է ընթերցումի մը, կամ, հոմանիշ միւս բառով, կոչումի մը, որով Աստուած պաշտօնէի մը կամ պաշտօնականութեան ձեռքով կատարուած քարոզութեանց, սիրտէ սիրտ փոխանցուած ազդեցութեանց, մարդը հոգևոր ուղղութեան մը վրայ բռնող զօրութեան (որ Սուրբ Հոգին իսկ է) միջոցաւ, և զեռ ուրիշ խորհրդաւոր կերպերով, Աւետարանի փրկութեան հրաւիրած ըլլալով աւելի կամ նուազ թուով անձեր, այս վերջինները, Ս. Հոգիէն իրենց պարզեւած ներքին ուրախութեամբ — խընդարեամբ — յաղթահարելով բաղձապիսի դժուարութիւններ և արգելիչ պատճառներ, որոնք տեսակ մը փորձութեան — նեղորիւն — վիճակի ենթարկած էին զիրենք այս առթիւ, մտադիւր յօժարութեամբ և ազատ կամքով ընդունած էին այդ հրաւերը։

Ու արդարացիօրէն ուրախ է ասոր համար, վասնզի կը հաւատայ թէ որքան շնորհաց ազդեցութեամբ նոյնքան կամքի ներգործութեամբ ընդգրկուած, մշակուած և արգիւնաւորուած կեանք մըն է այն՝ զոր հիմակ կը տեսնէ իր առջեւ, ասպարէզի մը մէջ, ուր ինքն ալ իր սրտին՝ այսինքն նուիրումին բաժինը բերած ըլլալը կրնայ այլևս չիչլւ անխառն գոհունակութեամբ, թէն առանց անձնապարծ ինքնամոլութեան։

Այդ ուրախութիւնը աւելի կատարեալ կ'ըլլայ, երբ զործիչը յետոյ երջանիկ պատեհութիւններ կ'ունենայ հաստատելու տակաւին թէ հոգևոր առաւելութիւններով այնքան ազնուացած այդ նորակազմ բայց արդէն ընտիր հօտը իր սիրտը չինիչ

ապագայութիւններովը և հնչեցուցած բա-
րի համբաւովը ի՞նչպէս և ո՞րքան փրկարար
եղած է աւելի կամ նուազ հեռաւոր ուրիշ
հասարակութեանց համար, իր օրինակին
ողջութեամբն ու դարձին սրտառու
դրոշմներովը հանդիսանալով կենդանի քա-
րոթութիւն Աստուծոյ ճշմարիտ հաւատքին,
և Յոյսին ի Քրիստոս, որուն յարութիւնը
կրաշխիքն է հաւատացելոց յարութեան,
իւր միջնորդութեամբը ցածուցուած ըլլալով
աստուածային ցասումը, և որուն, իբրեւ
յաւիտեանական դատաւորի և թագաւորի,
վերստին գալուստը ակնկալութիւնն է ա-
մենուն:

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Բ. կիր. Յիսնակաց)

(Ա. Թես. Դ. 1-11)

Իրաւամբ Առաքեալը իր մտածումին
մէջ այնքան սերախ կը միացնէ այս եր-
կու առաքելութիւնները, որոնք մարդ-
կային կեանքին և բնաւորութեան մէջ ալ
անկակից են արդէն իրարու:

Ժուժկալ անձինք միայն աշխատասէր
են իսկապէս, վասնզի առաջին հանգրուա-
նը՝ ուր շուսյառ և ցոփ կենցաղը կ'առաջ-
նորդէ մարդը, ծուլութիւնն է:

Հոգիին ինչպէս և մարմնին ոյժը,
կ'ըսէ Պոսիւէ, պատուէն է ժուժկալութեան:
Անով է որ մարդ իր մէջ կը ստեղծէ պիւրի
բայց քաղցր զօրութիւն մը, որով կ'իշխէ
հոգիին բոլոր բարի բերումներուն և յա-
խուսն ու անկարգ հակումներուն վրայ,
ու այդպէս տէր կ'ըլլայ իր անձին:

Ինքզինքին տէր է արդարեւ նա՝ մի-
այն, որ կրնայ սանձ դնել իր հաճոյքնե-
րուն և կիրքերուն, և չթողուլ որ իր մէջ
հոգեկան կեանքը բարձրացնող ազնուա-
գոյն յոյզերը ստորագաստին պղտոր և գը-
ռեհիկ միտումներու: Մին՝ ամէնէն կարե-
ւոր յատկանիւններէն, որոնցմով պէտք է—
ուշագրաւօրէն զանազանուելով հեթանո-
սականէն— բնորոշուի քրիստոնէին բարո-
յական կեանքը, պէտք է լինի ոչ միայն
այդ վիճակը, իբրեւ կեանքի առհասարակ
բնականոն և աստուածահաճոյ պայման մը,
այլ մանաւանդ այդ ուղղութեամբ օրըստ-
օրէ աւելի յառաջագէտ աստիճանով շեշ-

տուած այն ձկաւմը, որ Քրիստոսով մե-
զի աւանդուած սկզբունքներուն և պատ-
ուէրներուն խորհրդածութեամբը՝ ամէն
վայրկեան աւելի պայծառօրէն պիտի յի-
շեցնէ մեզի թէ ինչ է Աստուծոյ կամքը:

Եթէ քրիստոնեան կարենայ այսպէս
աննկատ դատումով և զգաստ սրտով լսել
իր հաւատքին ձայնը, պիտի հասկնայ իս-
կոյն թէ ընտանեկան բարոյական ամէնէն
էական պայմաններէն, անոր ամէնէն հիմ-
նական ամրութիւններէն մին է սրբութիւ-
նը, ժուժկալութեան ամէնէն ողջախոհ
ձեւը, որով մարդ կարող կ'ըլլայ ինքզինքը
հետեւ պահել խառնազնաց զարշուծիւն-
ներէ, թոյլ չտալով որ իր անձին և տան
պատիւը արատաւորութիւն կամ բարքի
տուփոտ թաթաւումներով:

Աստուծոյ ըմբռնումն է ճշմարիտ բա-
րոյականին սկիզբը. այդ է զիսաւոր պատ-
ճառը որ բարոյականութենէ զուրկ է կեն-
ցաղը հեթանոսարար ապրողներուն, վասն
զի Աստուծոյ նկատմամբ անոնց ունեցած
ծանօթութիւնը մուսլ և խուլ է ամպի պէս.
և այդ խիստ պատճառաւ է դարձեալ որ պէտք
է բարձր լինի բարոյականը ճշմարիտ քը-
րիստոնեաներուն, որոնց զգացումն ու գի-
տակցութիւնը այնքան լուսաւորուած են
այդ մասին:

Անական ցանկութեան անսանձ յա-
ճախանքը ոչ միայն ֆիզիքապէս և հոգե-
պէս կը քանդէ ենթակային անձը, այլ նաեւ
լպիւրէ հետամտութիւններով աւերում կը
սփռէ դէս ու դէն, կործանելով ուրիշնե-
րուն ևս կեանքն ու պատիւը: Անոնք որ
այդ ուղղութեան վրայ կը լարեն իրենց
կեանքին զիւրը, կ'անարգեն ոչ միայն մար-
դը՝ իրենց անձերուն մէջ, այլ նոյն ինքն
զԱստուած, որ ստեղծած է զմեզ ոչ թէ որ-
պէսպի պղծապօրծ դառածութեամբ քայ-
քայնք հոգեւոյն տաճարը, որ մեր մար-
մինն է, այլ որպէսպի ապրինք սրբութեան
մէջ, վայելելով արարչութեան խորհուրդին
օրհնութիւնը:

Որքան արդար է այս մասին Աստու-
ծոյ կամքը, որուն զգացումն ունինք ա-
մէնքս մեր խղճին խորը՝ ազդեցութեամբ
Ս. Հոգւոյն, նոյնքան խիստ և խոր է նաեւ
հակառակին համար իր վրէժխնդրութիւնը,
որ ինքնին այսինքն բնականօրէն ի յայտ
կուգայ յառաջ եկած մարմնական և հոգե-

կան փութութիւններուն մէջ, երբ կ'անտեսենք կամ կ'ոտնակոխենք իր կամքը:

Ըսուեցաւ վերեւ թէ ժողովուրդն անձինք մանաւանդ աշխատատեղեր են: Նոյնքան ճիշդ պիտի ըլլար իր շրջնայ ձեւին մէջ կարգաւ այս նախադասութիւնը, մտածելու համար թէ աշխատատեղեր անձերը ամէնէն աւելի ընդունակ են ժողովուրդ կեանքի: Արդարեւ, ինչպէս ըսուած է, աշխատատեղութիւնը մենէ կը հեռացնէ երեք չարիքներ. ձանձրոյթը, կարօտութիւնը, բայց մանաւանդ մոլութիւնները: Գոտարկապարտ մարդը բաց դուռն է, որ անարդիւ կը մանեն չարագործները:

Ոչինչ պէտք է ընդունիլ, հարկ է ըստանալ ամէն բան: Նիւթական ինչք, բարոյական յառաջացում, մտաւորական զարգացում, և ինչ որ կրնայ առաւելութիւն մը բերիլ միզի, այդ ամէնը պէտք է տանենք ճիշդ մը կամ արժէքի մը փոխարինութեամբ միայն: Իսկապէս քրիստոնէական է այս սկզբունքը, որ կնքուած է առաքելական միծ պատգամով. «որ ոչն զործիցէ, կերիցէ մի»: Ով որ իր միտքը կը վարժեցնէ այդ կերպով խորհելու, և իր խիղճը՝ չեղելու բնաւ այս բարոյական ուղղութեան, շուտով կը վայելէ նիւթական կամ տնտեսական անկախութեան բերկրանքը: Անիկա, ինչ գիրքի վրայ ալ գտնուի, չ'արհամարհեք բնաւ, և ընդհանրական պատուարեր միայն կը նկատէ իրեն համար իր անձնական տքնութիւնով իր քրտինքին գինովը իր ապրուստը ու հանդիսը շահելու ողջմտութիւնը:

Այդպիսիներն են ընդհանրապէս որ կ'աշխատին միշտ զոհ, և կ'ապրին երջանիկ, վասնզի հանգարտ է իրենց խղճմտանքը, զոր չվրդովեր ոչ մէկ բիծ կամ խէթ, վասնզի որեւէ ուրիշէ աւելի իրենք են մանաւանդ որ գիտեն թէ Աստուծոյ օրհնութեան և իրենց քանքին միայն կը պարտին իրենց ստացուածքը, թէ «իրենցն է հաջը որ կը խշխշայ իրենց հասկերուն մէջ», ու իրենք չեն երբեք յոյժ ժառանգորդները «մեռելներով աղքատած միծ դաշտերու»:

Դիտուած է թէ աշխատութեան նըկատմամբ այդ պարկեշտ ըմբռնումն ունեցող և կեանքի զգացումը երանաւէտուած այդ քաղցրութեամբ ճաշակող մարդիկ են

որ աւելի բարեգութ կը լինին այլոց հանդէպ, քան անոնք որ, զիպուածին այս կամ այն քմայքէն նպաստաւորուած, իրապէս և իրաւապէս աւելի պարտաւոր էին թերեւ իրենց բնական ժառանգակիցները նկատել ճակատագիրէն հալածուած դժբախտները:

Այո, որովհետեւ իր անձին հոգեկան և մարմնական կոտորածներէն արագած և այդ կերպով կանոնաւորուած իր իմացական և ֆիզիքական ուժերով բարոյական և նիւթական անկախութեան հասած մարդուն սիրտը, դուարթ և հզօր, առաքինութեան գաճարան մըն է, ու անոր մէջ ամէնէն մեծարժէք գոհարներն մին՝ ընկերին սէրը, կամ, առաքելալին բառով, եղբայրասիրտքները:

30 Հոկտ. 1930

Գանիրի

Թ. Ե. Գ.

Ուրախութիւն, հանգստութիւն և զուարճութիւն կը սիրիք. ասոնց ամենուն ալ հաւը առի ևս ու երկար ժամանակ վայելեցի: Աստուծոյ ծառայելուն պիս ուրախութիւն, հանգստութիւն և զուարճութիւն չկայ:

Թշուառութեան մէջ կրօնքը կը մխիթարէ մեզ և կեանքի դառնութիւններուն երկնային փաղցրութիւն կը խտնէ:

ՊՈՍԻԻԷ

*

Հանգիստ սիրս ունենալու համար մաքուր խղճմտանք պիտի:

*

Աստուծոյ ամեն քան շեւեղուն հաւատացող մարդը ո՛չ ծածուկ և ոչ հրապարակաւ կը մեղանչի:

*

Ծշմարիտ բարեպաշտութիւնը կը բարձրացնէ միտքը ու կ'ազնուացնէ սիրտը:

*

Երջանկութեան ամեն ունեւն ասպնով ճամբան ստափնութիւնն է:

*

Թի որ մարդիկ երջանիկ ըլլալ ուզեն շուտով կ'ըլլային. քայց կ'ուզեն ուրիշներէն աւելի երջանիկ ըլլալ, ինչ որ դժուար է. վասնզի ուրիշները եղած են ամէնիկ երջանիկ կը շեւեղեն: